ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ե՞րբ է վերջին անգամ հիշատակվել Հայաստանի սատրապ–կառավարիչ Երվանդ II–ը.

1) Ք. ա. 360–ական թթ.
2) Ք. ա. 330–ական թթ.
3) Ք. ա. 460–ական թթ.
4) Ք. ա. 410–ական թթ.

2 Ե՞րբ Հրահատ III–ը պաշարեց Արտաշատը.

1) Ք. ա. 67 թ.
2) Ք. ա. 65 թ.
3) Ք. ա. 68 թ.
4) Ք. ա. 66 թ.

3 Ե՞րբ է Սիսը դարձել Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք.

1) 1151 թ.
2) 1175 թ.
3) 1169 թ.
4) 1173 թ.

4 Ե՞րբ է Իսրայել Օրին ժամանել Ռուսաստան՝ Պետրոս I–ին հանդիպելու նպատակով.

1) 1700 թ.
2) 1702 թ.
3) 1699 թ.
4) 1701 թ.

5 Ե՞րբ է տպագրվել Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը.

1) 1784–1786 թթ.
2) 1795–1799 թթ.
3) 1781–1782 թթ.
4) 1779–1781 թթ.

6 Ե՞րբ են Մ. Գիրսը և Հ. Վանգենհայմը կազմել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագիրը.

1) 1913 թ. սեպտեմբերի 10–ին
2) 1914 թ. հունվարի 26–ին
3) 1912 թ. սեպտեմբերի 10–ին
4) 1913 թ. հոկտեմբերի 10–ին

7 Լենինականի հէկը գործարկվեց՝

1) 1928 թ.
2) 1931 թ.
3) 1925 թ.
4) 1927 թ.

79 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

1) Ելիզավետպոլի և Բաքվի նահանգների հայկական գավառների շուրջ 30000 հայ բնակչությունից 1918–1920 թթ. ադրբեջանցիների քաղաքականության արդյունքում փրկվեց միայն 20 հազարը:
2) Կիլիկիայում 1920 թ. սկզբներին ապրում էր 300 հազար հայ, սակայն տեղում հաստատված ֆրանսիական վարչությունը լուրջ քայլեր չձեռնարկեց հայերի անվտանգությունն ապահովելու համար:
3) Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր և կազմեց «Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը»:
4) Մուդրոսի զինադադարից հետո Կիլիկիան զինագրավվեց ֆրանսիական զորքերի կողմից, իսկ 1919 թ. նոյեմբերին նրանց փոխարինեցին անգլիական զորքերը:
5) Կապիտան Արսեն Շահմազյանը 1919 թ. նոյեմբերին ժամանեց Գորիս և ստանձնեց Արցախի զեներալ–կոմիսարի պաշտոնը:
6) Արսեն Շահմազյանին զեներալ–կոմիսարի պաշտոնում փոխարինեց Սերգեյ Մելիք–Յոլչյանը:
7) Բաքվի 1918 թ. ինքնապաշտպանության գործում մեծ դեր ունեցան զեներալ Նազարբեկյանը, Դրոն, Համազասպը, Գրիգորի Կորգանովը և ուրիշներ:
8) Այնթապի ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր հոգևոր առաջնորդ Պետրոս Սարաճյանը:
9) Մուդրոսի զինադադարից հետո Անդրկովկասում ամրապնդվեցին Անգլիայի դիրքերը:

80 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

1) Միայն 1947–1951 թթ. ԱՄՆ տեղափոխվեցին շուրջ 10 հազար հայեր, հիմնականում հայ ռազմագերիներ՝ ԽՍՀՄ նախկին քաղաքացիներ, որոնց վերադարձը հայրենիք կավարտվեր ստալինյան ճամբարներում արգելափակումով:
2) 1923 թ. Խորհրդային Հայաստան ներգաղթածների ընդհանուր թիվը կազմեց 5016 մարդ՝ մեծ մասամբ վանեցիներ:
3) 1988–1990 թթ. Ադրբեջանի իշխանությունների կողմից կազմակերպված կոտորածների ու բռնի տեղահանությունների հետևանքով շուրջ 400 հազար հայեր հեռացան այդ հանրապետությունից:
4) 1920–ական թվականներին խոշոր գաղթօջախ ձևավորվեց նաև Ամերիկայում (ԱՄՆ և Կանադա)՝ շուրջ 130 հազար հայերով:
5) 1945 թ. մայիսի 28–ին ՀՀ նախկին վարչապետ Հ. Քաջազնունին դիմեց Ստալինին, Ռուզվելտին և Չերչիլին՝ խնդրելով ջանքեր գործադրել Հայկական հարցի արդարացի լուծման ուղղությամբ:
6) Հայկական համաշխարհային կոնգրեսին մասնակցում էին 12 երկրների 715 պատգամավորներ, որոնք ներկայացնում էին 50 սփյուռքահայ կազմակերպություններ, 51 եկեղեցական թեմեր:
7) 1920–ական թվականների սկզբին Խորհրդային Միության սահմաններից դուրս հաշվվում էր շուրջ մեկ միլիոն հայ բնակչություն:

8 **Ե՞րբ է Բաքվում տեղի ունեցել հայ բնակչության կոտորածը և տեղահանությունը.**

1) 1991 թ. հունվարի 13–20–ը
2) 1990 թ. ապրիլի 5–12–ը
3) 1990 թ. հունվարի 13–20–ը
4) 1990 թ. փետրվարի 27–29–ը

9 **Ըստ հայկական ավանդության՝ ո՞ւմ անունից են առաջացել «արմեն» և «Արմենիա» անվանումները.**

1) Արամանյակի
2) Արամայիսի
3) Արամի
4) Արմենոսի

10 **Սկսած IV–V դարերից՝ հայկական մշակույթը ո՞ր մշակույթին ավելի հաղորդակից դարձավ.**

1) միջերկրածովյան քրիստոնեական
2) անտիկ
3) հունական
4) արևելյան

11 **Ո՞վ է իր աշխատության մեջ կարևոր տեղեկություններ հաղորդել Արևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Իտալիայի, Եգիպտոսի և այլ երկրների հայկական գաղթավայրերի մասին.**

1) Գրիգոր Դարանաղցին
2) Սիմեոն Լեհացին
3) Հակոբ Կարնեցին
4) Թովմա Մեծոփեցին

12 **Արցախի մելիքությունների սահմանները տարածվում էին Գանձակի .... շրջաններից մինչև Արաքս գետ.**

1) արևելյան
2) արևմտյան
3) հյուսիսային
4) հարավային

13 **Ո՞վ էր Զեյթունի 1895 թ. ապստամբության փաստական ղեկավարը.**

1) Նազարեթ Չավուշը
2) Ղազար Շովրոյանը
3) Գարուն Աղասին
4) Մխո Շահենը

14 **Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության ժամանակ ո՞վ է ղեկավարել հյուսիսային կողմի պաշտպանությունը.**

1) Գևորգ Չավուշը
2) Սեբաստացի Մուրադը
3) Անդրանիկ Օզանյանը
4) Հրայրը

15 **1945–1952 թթ. Հայաստանում քանի՞ մարդ բռնադատվեց.**

1) 2947
2) 2948
3) 2945
4) 2946

16 **Ո՞վ էր հայկական ազգային կոմիտեի ղեկավարը, ով հուշագիր ներկայացրեց ՄԱԿ–ի նիստին.**

1) Ս. Վրացյանը
2) Հ. Օհանջանյանը
3) Ա. Ահարոնյանը
4) Պողոս Նուբար փաշան

17 **Հայոց ո՞ր արքայի մասին է հույն պատմիչի հետևյալ բնութագրումը.**

«Հայոց թագավոր [……..–ը] ուներ միջակ հասակ, բայց հակված էր դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմայեցիների մեջ»:

1) Սանատրուկ II-ի
2) Տրդատ I-ի
3) Տրդատ II-ի
4) Վաղարշ I-ի

18 **Ո՞ր իրադարձության կապակցությամբ է հրապարակվել հետևյալ կոչը.**

«Ցո՛ւյց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգա ստրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարվում են մեր անկապտելի իրավունքները»:

1) Հայոց եկեղեցու գույքի բռնագրավման
2) արևմտահայության կոտորածների
3) Սասունի 1904 թ. իրադարձությունների
4) հայ–թաթարական ընդհարումների

76 **Թվարկվածներից ընտրել երեքը, որոնք բնութագրում են Առաջին հանրապետության տնտեսական քաղաքականությունը.**

1) Հողը տրվեց գյուղացիներին որպես սեփականություն հավասարության սկզբունքով՝ ըստ շնչերի կամ աշխատող ձեռքերի:
2) Կալվածատիրական հողատիրությունը վերացվեց մասնակի փոխհատուցմամբ:
3) Հողի մասին նոր օրենքի հիմքում դրվեց հողի սեփականաշնորհման ծրագիրը:
4) Արդյունաբերության և առևտրի բնագավառում թույլատրվեց սեփականության տարբեր ձևերի՝ պետական, մասնավոր, կոոպերատիվ, կոնցեսիա, գոյությունը:
5) Վերացվեց հողի պետական սեփականությունը, թույլատրվեց հողի առքն ու վաճառքը:
6) Պետականացվեցին բոլոր մասնատիրական, վանքապատկան, վակուֆային, եկեղեցական ու լքյալ հողերը:
7) Մտցվեց եկամտային–առաջադիմական հարկ:
8) Մտցվեց մեկ միասնական հարկ բոլոր տնտեսվարողների համար:
9) Պետությունը խրախուսում էր միայն օտարերկրյա կապիտալիստների ներդրումները տնտեսության մեջ:

77 **Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Վաղարշ II–ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը
2) Վաղարշ II–ի գահակալության ավարտը
3) Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ
4) Կարակալլա կայսեր ուղարկած զորքի ջախջախումը Տրդատ II–ի գլխավորությամբ
5) Ներսեհ Սասանյանի՝ Հռոմի դեմ պատերազմի սկիզբը
6) Տրդատ II–ի հաղթական արշավանքը դեպի Տիզբոն
7) Խոսրով II–ի գահակալության սկիզբը
8) հայ–հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում

78 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Արարատյան գնդի կազմավորումը
2) Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կազմավորումը
3) Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծումը
4) Ժամանակավոր կառավարության ձևավորումը
5) Արևելահայ ազգային խորհրդի ստեղծումը
6) Առանձին հայկական կորպուսի կազմավորումը
7) Անդրկովկասյան կոմիսարիատի կազմավորումը
8) Հայկական կորպուսի կազմավորումը
9) Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծումը

73 **Բագրատունյաց Հայաստանում իշխանաց իշխանի գործառույթներից էր.**

1) արքունիքի պահպանությունը, արքունի պահակազորի հրամանատարությունը
2) թագաժառանգի դաստիարակությունը և խնամակալությունը
3) ոստանիկ այրուձիի հրամանատարությունը
4) ենթակա իշխանների գործունեության համար թագավորին հաշվետու լինելը
5) նրան էին ենթարկվում արքայական կալվածքները տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները

74 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ այլախոհին.**

1) ընդունում էր խորհրդային օրենքներն ու պաշտոնապես հռչակված արժեքները և պայքարում էր դրանց պաշտպանության համար
2) խորհրդային իշխանության և մարքս–լենինյան գաղափարախոսության դեմ պայքարում էր ուժային և գաղափարական միջոցներով
3) պայքարում էր մարդու իրավունքների պաշտպանության համար
4) անընդունելի էր համարում խորհրդային օրենքները և պաշտոնապես հռչակված արժեքները
5) խորհրդային իշխանություններից պահանջում էր պահպանել օրենքները և ԽՍՀՄ Սահմանադրությունը
6) խորհրդային իշխանության և մարքս–լենինյան գաղափարախոսության դեմ գաղափարական պայքար էր մղում

75 **Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.**

1) Մերձավոր Արևելքում Սելևկյան պետության դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I–ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
2) Արտաշեսը Ք. ա. 165 թ. վճռական հակահարված տվեց Սելևկյան Անտիոքոս III –ին, որը փորձում էր Հայաստանը ենթարկել Սելևկյանների գերիշխանությանը:
3) Մերձավոր Արևելքում Պարթևստանի դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I–ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
4) Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա–պարթևական բանակցությունների արդյունքն էր ազդեցության ոլորտների բաժանման մասին նրանց միջև համաձայնագրի կնքումը:
5) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I–ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը:
6) Մերձավոր Արևելքում Հռոմի դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I–ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
7) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I–ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Մեծ Հայքի տարածքը:
8) Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա–պարթևական բանակցությունների արդյունքում Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց:

19 **Ի՞նչ էր իրենից ներկայացնում «Մաղխազական այրուձին».**

1) ընտրյալ նետաձիգներից բաղկացած և մշտապես արքունիքում գտնվող, թագավորի անձի պաշտպանությունն ապահովող ընտիր հեծելազոր
2) մաղխազի անվտանգությունն ապահովող հեծելազոր
3) նախարարական տան հեծելազոր
4) արքունիքին կից հատուկ հեծելազոր, որն իրականացնում էր թագավորական ոստանի պաշտպանությունը

20 **Երիտթուրքերի կուսակցության գաղափարախոս Բ. Շաքիրի անմիջական ղեկավարությամբ ստեղծված մարմինը կոչվել է՝**

1) Միություն և առաջադիմություն
2) Երեքի հատուկ կոմիտե
3) Երեքի գործադիր կոմիտե
4) Հատուկ կազմակերպություն

21 **Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում տնտեսության զարգացման հետևանքն այն եղավ, որ.**

1) ձկնորսությունը դարձավ առաջատար ճյուղ
2) Հայաստանը դարձավ մանուֆակտուրային երկիր
3) արհեստագործությունն անջատվեց երկրագործությունից
4) երկրագործությունն անջատվեց անասնապահությունից

22 **1894 թ. ծրագրով դաշնակցությունն ազդարարում էր, որ իր նպատակն է՝**

1) Արևմտյան Հայաստանի միացումը Ռուսաստանին
2) թուրքական սուլթանի, պարսից շահի և ռուսական ցարի տիրապետությունից հայ ժողովրդին ազատելը
3) Արևմտյան Հայաստանում հայկական անկախ պետություն ստեղծելը
4) ապստամբության ճանապարհով Արևմտյան Հայաստանի ազատագրությանը հասնելը, որով հասկացվում էր հայկական նահանգների ինքնավարության հաստատում

23 **Արգիշտի I–ի նվաճողական ձեռնարկումները ներկայացնել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. հաղթարշավը դեպի Ալիշտու
բ. արշավանքը Չլդրրի ավազան
գ. արշավանքը Զագրոսյան լեռներով մինչև Պարսուա
դ. Աբիլիանի երկիրը տերությանը միացնելը
ե. արշավանքը դեպի Փոքր Ասիայի տարածք
զ. արշավանքը Զաբախա

1) ա, զ, դ, գ, ե, բ
2) զ, դ, ե, գ, ա, բ
3) զ, դ, ե, ա, գ, բ
4) զ, ա, դ, գ, ե, բ

24 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Օշին արքայի գահակալության սկիզբը
բ. եկեղեցիների միավորման մասին որոշման ընդունումը Սսի եկեղեցական ժողովում
գ. մամլուքների կողմից Ադանա և Տարսոն քաղաքները վերջնականապես գրավելը
դ. Օշին արքայի և Կոստանդին Գ Կեսարացի կաթողիկոսի կողմից եկեղեցական ժողովի գումարումը Ադանայում
ե. կիլիկյան գահի անցումը Նղրեցիներին

1) բ, ա, դ, գ, ե
2) ա, բ, դ, ե, գ
3) բ, ա, դ, ե, գ
4) բ, դ, ա, գ, ե

25 **1806–1812 թթ. ռուս–թուրքական պատերազմի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտը
բ. Ախալքալաքի բերդի գրավումը ռուսական զորքերի կողմից
գ. Ախալցխա քաղաքի պաշարումը ռուսական զորքերի կողմից
դ. Ախալքալաքի գավառի գրավումը ռուսական զորքերի կողմից

1) բ, գ, ա, դ
2) դ, բ, ա, գ
3) ա, գ, բ, դ
4) ա, գ, դ, բ

26 **Արցախյան պատերազմի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ**

ա. Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը ԼՂ–ում՝ Ռ. Քոչարյանի գլխավորությամբ
բ. Շուշիի ազատագրումը
գ. Մարտակերտի ազատագրումը
դ. Լաչինի հաղթական գործողությունները
ե. Քելբաջարի հյուսիսային մասի և Օմարի լեռնանցքի ազատագրումը

1) բ, դ, ա, գ, ե
2) բ, ե, ա, գ, դ
3) դ, բ, գ, ա, ե
4) գ, բ, դ, ա, ե

71 **Ընտրել երեք ճիշտ պնդում.**

ա. Ռուս պատմաբան Մարի Բրոսեն գրել է «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատությունը:
բ. Ղուկաս Ինճիճյանն ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է հին և նոր Հայաստանի նահանգների, բնակավայրերի, դրանց բնակչության ու տեղագրության հարցերին:
գ. 1836–1837 թթ. Մադրասում հրատարակվել է «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» մեծարժեք բառարանը:
դ. Հայտնի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանին մեծ ճանաչում են բերել Մ. Մաշտոցի, Ս.Պարթևի, Ա. Տեր–Ղուկասյանի, Վ. Բեհբութովի դիմանկարները, «Խնջույք Քուռ գետի ափին» գեղանկարը:
ե. Հայերենով գրված համաշխարհային պատմության առաջին ձեռնարկը՝ «Տիեզերական պատմության» երկհատորյակը, մեծ ճանաչում է բերել պատմաբան Հովսեփ Գաթրճյանին:
զ. VIII դ. առաջին կեսին ասպարեզ են իջնում բնանկարիչ Մկրտում Հովնաթանյանը և նրա որդիները՝ Հակոբն ու Աղաթոնը:
է. 1827 թ. Գալուստ Շերմազանյանը թատերական շենքի վերածած իր երկհարկանի տանը բեմադրել է հայ և օտար դրամատուրգների պիեսներ:

1) դ, ե, է
2) բ, գ, ե
3) ա, գ, զ
4) բ, դ, ե

72 **Ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

ա. 1857 թ. Կ. Պոլսի ուսումնական խորհրդի անդամներ Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Գ. Պալյանը և ուրիշներ մշակում են արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն և ներկայացնում համայնքի ընդհանուր ժողովի հաստատմանը:
բ. 1863 թ. մայիսի 24–ին Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատում է կանոնադրությունը:
գ. 1869 թ.՝ Մկրտիչ Խրիմյանի պատրիարք դառնալուց հետո, Ազգային սահմանադրությունը գործարկվեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում:
դ. Ուսուցիչ Արսեն Կրիտյանի և զինագործ Պետրոս Հայկազունու գլխավորությամբ 1874 թ. Մեծ Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր) ստեղծվում է «Բարենպատակ ընկերություն» խմբակը:
ե. 1882 թ. նոյեմբերի վերջերին թուրքական ոստիկանությունը պատահականորեն հայտնաբերում է Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, բանտարկում շուրջ 70 մարդ:
զ. 1882 թ. դեկտեմբերին տեղի է ունենում Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը, որին անձամբ հետևում էր սուլթան Աբդուլ Համիդ II–ը:
է. Մկրտիչ Խրիմյանի խորհրդով Մկրտիչ Փորթուգալյանը և նրա 12 սաները ստեղծում են մի միություն, որը կազմում է ապագա Արմենական կուսակցության կորիզը:
ը. 1885 թ. աշնանը Վան քաղաքում հիմնադրվում է առաջին հայ ազգային կուսակցությունը՝ «Արմենական» անունով:
թ. 1896 թ. Լոնդոնի առաջին համագումարում Հնչակյան կուսակցությունը պառակտվում է երկու թևի՝ սոցիալիստական և ազգային:

1) գ, ե, թ
2) ա, է, ը
3) բ, դ, զ
4) բ, դ, ե

69 **Կատարել համապատասխանեցում.**

N	Պատմիչը	N	Աշխատության վերնագիրը	N	Շարադրանքի ընդգրկման սկիզբը	N	Շարադրանքի ընդգրկման վերջը
1	Կիրակոս Գանձակեցի	1	«Տարեգիրք»	1	951 թ.	1	մինչև 1267 թ.
2	Սմբատ Գունդստաբլ	2	«Տիեզերական պատմություն»	2	952 թ.	2	1272 թ.
3	Մատթեոս Ուռհայեցի	3	«Հայոց պատմություն»	3	քրիստոնեության ընդունումից	3	մինչև 1136 թ.
4	Վարդան Արևելցի	4	«Ժամանակագրություն»	4	«անսկիզբ» ժամանակներից	4	մինչև 1265 թ.

1)

1	3	3	4
2	1	1	2
3	4	2	3
4	2	4	1

2)

1	3	3	4
2	1	1	2
3	2	2	3
4	4	4	1

3)

1	3	4	1
2	1	1	2
3	4	2	3
4	2	3	4

4)

1	3	3	4
2	1	2	3
3	4	1	2
4	2	4	1

70 **Ստորև բերված պնդումներից ո՞ր երեքն են սխալ.**

ա. Աշոտ Մսակերի եղբայր Շապուհը ստանձնեց սպարապետի պաշտոնը։
բ. Աշոտ Մսակերին հայոց իշխանաց իշխանի պաշտոնում հաջորդեց որդին՝ Տարոնի տեր Սմբատ Բագրատունին։
գ. Հայոց իշխան Բագարատ Բագրատունին Արմինիայում մեծ հեղինակություն ուներ։
դ. 850 թ. հայ նախարարները հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու գլխավորությամբ արաբ հարկահավաքին թույլ չտվեցին երկրի սահմանն անցնել և հենց այդտեղ էլ նրան հանձնեցին հարկերը։
ե. 850 թ. Բագարատ Բագրատունին Աշոտ Արծրունու հետ արաբ նվաճողներին դուրս քշեց Տայքից և արաբական մի ուրիշ զորախումբ ջախջախեց Վասպուրականում։
զ. Յուսուֆը Խլաթում ձերբակալում է Բագարատին և ուղարկում խալիֆայություն։
է. Վանում Յուսուֆը փախչում է խութեցիների հետապնդումից և ապավինում Սուրբ Խաչ եկեղեցու բարձրությանը։
ը. «Արյան լիճ» կոչվող լեռնային բարձրադիր լճի ափին արաբների դեմ տեղի ունեցած ճակատամարտն ավարտվում է հայերի հաղթանակով։

1) գ, զ, ը
2) բ, ե, է
3) ա, գ, ե
4) բ, դ, զ

27 **Արևմտյան Հայաստանում բյուզանդացիների ստեղծած վարչամիավորը համապատասխանեցնել դրանում ընդգրկված Մեծ Հայքի նահանգին.**

1. Այրարատի մեծ մասը
2. Տայք
3. Տուրուբերան
4. Բարձր Հայք

ա. «Մասն Մեծ Հայոց»
բ. «Մեծ մասն Մեծ Հայոց»
գ. «Ներքսագոյն Հայք»
դ. «Խորագոյն Հայք»
ե. «Մեծ Հայք»

1) 1–գ, 2–դ, 3–ե, 4–ա
2) 1–ա, 2–դ, 3–բ, 4–գ
3) 1–բ, 2–դ, 3–ե, 4–գ
4) 1–գ, 2–բ, 3–ե, 4–ա

28 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Լեռնային Ղարաբաղի բռնակցումն Ադրբեջանին
բ. Նախիջևանի մարզը Ադրբեջանի հովանավորությանը հանձնելը
գ. Լեռնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ տրամադրելու մասին որոշման ընդունումը
դ. Ախալքալաքի բռնակցումը Վրաստանին

1. 1923 թ. հուլիսի 7
2. 1921 թ. հուլիսի 5
3. 1921 թ. հուլիսի 7
4. 1921 թ. նոյեմբերի 6
5. 1921 թ. մարտի 16

1) ա–1, բ–4, գ–3, դ–2
2) ա–4, բ–2, գ–1, դ–5
3) ա–2, բ–5, գ–1, դ–4
4) ա–2, բ–5, գ–3, դ–1

29 **Գտնել ճիշտ պատասխանը.**
409–րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին ձգվեց Մոզդոկ քաղաքից՝

1) Հարավսլավիա, Ռումինիա, Լեհաստան, Չեխոսլովակիա
2) Հարավսլավիա, Ավստրիա, Լեհաստան, Չեխոսլովակիա
3) Լեհաստան, Հունգարիա, Ռումինիա, Իտալիա
4) Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա, Չեխոսլովակիա

30 **Ե՞րբ է հիմնադրվել Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցը.**

1) XVII դ. վերջին
2) XVI դ. սկզբին
3) XVII դ. սկզբին
4) XVI դ. վերջին

31 **Գ. Նժդեհի ուժերը Որոտանի կիրճում ե՞րբ ջախջախիչ պարտության մատնեցին Նուրի փաշայի զորքերին·**

1) 1920 թ· ապրիլի վերջին
2) 1919 թ· ապրիլի սկզբին
3) 1919 թ· ապրիլի վերջին
4) 1920 թ· ապրիլի սկզբին

32 **Վ. Լենինի առաջարկի հիման վրա խորհրդային հանրապետությունները դաշնային սկզբունքով միավորելու մասին նոր նախագիծն ընդունվեց՝**

1) 1922 թ. դեկտեմբերի 30–ին
2) 1922 թ. դեկտեմբերի 10–ին
3) 1922 թ. մարտի 12–ին
4) 1922 թ. հոկտեմբերի 6–ին

33 **Ե՞րբ է Կիպրոսի արտաքին գործերի նախարար Կիպրիանուն ՄԱԿ–ի ամբիոնից կոչ արել քննարկելու Հայկական հարցը.**

1) 1967 թ. ապրիլին
2) 1970 թ. հունիսին
3) 1965 թ. ապրիլին
4) 1965 թ. հոկտեմբերին

34 **Հարավարևմտյան ուղղությամբ արշավանքի ժամանակ Մենուայի բանակները հասան մինչև՝**

1) Դիալա գետի ավազան
2) Զագրոսյան լեռներից դեպի արևելք
3) Մելիտեա և Մանա
4) Կումենու և Ասորեստան

35 **Թվարկվածներից ո՞վ մասնագիտությամբ բժիշկ չէ.**

1) Ջակոմո Չամչյանը
2) Լևոն Տիգրանյանը
3) Միհրան Ղասաբյանը
4) Մարգար Առուստամովը

36 **Ի՞նչ առաջարկությամբ էին հանդես գալիս Պ. Մդիվանին և նրա կողմնակիցները Անդրկովկասի հանրապետությունների դաշնության ստեղծման ժամանակ.**

1) հանրապետություններին միայն մշակութային ինքնավարություն տալու
2) հանրապետությունների միջև միայն ռազմական դաշինք հաստատելու
3) հանրապետությունների ինքնիշխանությունը վերացնելու առաջարկությամբ
4) հանրապետությունների միջև երկկողմանի պայմանագրային հարաբերություններ հաստատելու և նրանց իրական անկախությունը պահպանելու

67 **Թվարկվածներից որո՞նք են Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման արդյունքներ.**

ա. Հիմնադրվեց քիմիական արդյունաբերությունը:
բ. Գյումրին դարձավ պղնձարդյունաբերության կենտրոն:
գ. Երկրորդ հնգամյակի տարիներին կառուցվեց 18 արդյունաբերական ձեռնարկություն:
դ. Առաջին երկու հնգամյակների տարիներին կառուցվեց 44 արդյունաբերական ձեռնարկություն:
ե. Ղափանը դարձավ ոսկու արդյունահանման կենտրոն:
զ. Բանվորների թիվն աճեց և 1940 թ. կազմեց 500 000:
է. Երևանում կառուցվեց արհեստական կաուչուկի ԽՍՀՄ առաջին գործարանը:

1) բ, ե, զ
2) բ, դ, է
3) ա, դ, է
4) ա, գ, ե

68 **Կատարել համապատասխանեցում.**

Տարեթիվ

1. 1920 թ. հոկտեմբերի 11
2. 1920 թ. հոկտեմբերի 14
3. 1920 թ. հոկտեմբերի 28
4. 1920 թ. նոյեմբերի 23
5. 1920 թ. նոյեմբերի 29
6. 1920 թ. դեկտեմբերի 2

Իրադարձություն

ա. Կարսի անկումը
բ. Երևանի հայ–ռուսական համաձայնագրի կնքումը
գ. հայ–ռուսական «Եզրափակիչ որոշման արձանագրության» նախաստորագրումը
դ. Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականի ընդունումը
ե. Հայաստանը խորհրդայնացնելու համար վճռական գործողությունների դիմելու մասին ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի որոշման ընդունումը
զ. Բ. Լեզրանի գլխավորած պատվիրակության ժամանումը Երևան
է. Հայաստանի ՌՀԿ–ի մուտքը Հայաստան և «խորհրդային սոցիալիստական հանրապետության» հռչակումը

1) 1–զ, 2–ե, 3–ա, 4–բ, 5–է, 6–դ
2) 1–զ, 2–ե, 3–գ, 4–դ, 5–է, 6–բ
3) 1–ե, 2–զ, 3–բ, 4–դ, 5–ա, 6–գ
4) 1–ե, 2–զ, 3–ա, 4–գ, 5–դ, 6–բ

65 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Խորհրդային Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնությունը կոլտնտեսություններին անդամագրվեց 1938–1940 թթ.:
բ. Հակակոլտնտեսային շարժումն արտահայտվեց նաև գյուղացիների կողմից իրենց անասուններն անխնա մորթելու ձևով, որի հետևանքով Հայաստանում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 30 տոկոսով, իսկ մանր եղջերավորներինը՝ կիսով չափ:
գ. Հարկադրաբար ստեղծված կոլտնտեսությունները լուծարելուց հետո խորհրդային պետությունը որպես ճնշման միջոց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ կիրառեց հարկերի ավելացման քաղաքականությունը:
դ. Գյուղացիների տեղաշարժերը կասեցնելու նպատակով խորհրդային իշխանությունը նրանցից խլեց տրանսպորտային միջոցները:
ե. «Աջերի», տրոցկիստների ջախջախումից հետո ՀամԿ(բ)Կ ստալինյան ղեկավարությունը հաստատեց իր բացարձակ իշխանությունը:
զ. Հնչակյան կուսակցությունը, Կոմինտերնի ընդունած որոշման համաձայն, դադարեցրեց իր գործունեությունը արտասահմանում:
է. Խորհրդային երկրում ձևավորվում էր Ստալինի անձի պաշտամունքը, որը բացահայտ դարձավ 1924 թ.՝ Լենինի մահվանից հետո:

1) բ, զ, ե
2) բ, դ, զ
3) ա, դ, է
4) ա, գ, զ

66 **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են բնութագրում Սյունիքում և Արցախում 1720–ական թթ. ծավալված ազատագրական պայքարի նշանակությունը.**

ա. Հայկական ուժերի տարած բազում հաղթանակների շնորհիվ հնարավոր եղավ առժամանակ թոթափել օսմանյան և պարսկական տիրապետությունները:
բ. Ազատագրական այդ պայքարը մեծապես բարձրացրեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունն ու ազատասիրական ոգին:
գ. Ազատագրական այդ պայքարը հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ:
դ. Ստիպեց պարսից պետությանն իր հետագա քաղաքականության մեջ հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, ճանաչել նրանց իրավունքները:
ե. Կասեցրեց օսմանյան զորքերի՝ դեպի Արարատյան դաշտ արշավանքը:
զ. Աջակցեց Նադիր շահին՝ Պարսկաստանից դուրս քշելու աֆղանական և թուրքական նվաճողներին:

1) բ, զ, դ
2) ա, ե, զ
3) ա, բ, գ
4) բ, դ, ե

37 **Որքա՞ն մարդ հայրենադարձվեց 1926–1936 թթ. ընթացքում.**

1) 23000
2) 51000
3) 5016
4) 32000

38 **Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին.**

«Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

Ո՞ւմ կողմից են ասվել վերը բերված խոսքերը.

1) Սուրեն Հարությունյանի
2) Զորի Բալայանի
3) Յակով Զարոբյանի
4) Գրիգոր Հարությունյանի

39 **Ո՞ր պատմիչն է մեջբերված վկայության հեղինակը.**

« …հնուց հայերեն գիր է եղել, ինչը վկայվեց Լևոն արքայի ժամանակ, քանզի դրամ գտավ Կիլիկիայում՝ դրոշմված հայերեն գրով… Հայկազուն թագավորների անուններով»:

1) Սմբատ Գունդստաբլ
2) Վարդան Արևելցի
3) Ասողիկ
4) Կիրակոս Գանձակեցի

40 **Հայ տրոցկիստների առաջին հրապարակային ելույթը հայտնի է … անունով.**

1) «Երեքի դեկլարացիա»
2) «Երեքի դեկրետ»
3) «Երեքի հայտարարություն»
4) «Երեքի դիմում»

41 **1991 թ. սեպտեմբերի 21–ի հանրաքվեի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը՝**

1) մտավ ԱՊՀ–ի կազմը
2) հռչակվեց անկախ պետություն
3) ընդունեց «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը»
4) դուրս եկավ ԱՊՀ–ի կազմից

42 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սմբատ Արծրունու օծումը հայոց թագավոր
բ. Աբգար Թոխաթեցու գլխավորած պատվիրակության մեկնումը Վենետիկ
գ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցության հրավիրումը Ստեփաննոս Սալմաստեցու կողմից
դ. Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Ս. Էջմիածնում
ե. Սալմաստեցու գլխավորած պատվիրակության մեկնումը Եվրոպա
զ. Ջահանշահի գահակալման ավարտը

1) դ, ա, գ, զ, բ, ե
2) ա, դ, զ, գ, բ, ե
3) դ, զ, ա, գ, ե, բ
4) դ, ա, զ, գ, ե, բ

43 **1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սան Ստեֆանոյի հաշտության կնքումը
բ. Լոնդոնում ռուս–անգլիական համաձայնագրի կնքումը
գ. Դիադինի գրավումը Երևանյան ջոկատի կողմից
դ. Բեռլինի վեհաժողովի սկիզբը
ե. Կարսի գրավումը Հ. Լազարևի զորամասի կողմից

1) գ, բ, դ, ե, ա
2) բ, գ, դ, ա, ե
3) ա, բ, դ, ե, գ
4) գ, ե, ա, բ, դ

44 **Առաջին աշխարհամարտի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. հայ կամավորական ջոկատների ստեղծման սկիզբը
բ. Առաջին աշխարհամարտի սկիզբը
գ. Սայքս–Պիկոյի պայմանագրի կնքումը
դ. ռազմական գաղտնի դաշինքի կնքումը Թուրքիայի և Գերմանիայի միջև
ե. Բաթումի բանակցությունների սկիզբը

1) ա, բ, դ, գ, ե
2) բ, ա, դ, ե, գ
3) բ, դ, ա, գ, ե
4) բ, ա, դ, գ, ե

63 **Ընտրել երեք ճիշտ պնդումները.**

ա. Ք. ա. 830–ական թթ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում կազմավորվել էր Էթիունի երկրի համադաշնությունը:
բ. Արգիշտի I–ի օրոք Վանի թագավորությունը (Բիայնիլի–Ուրարտու–Արարատ) հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:
գ. Արգիշտի II–ը, թեև գահ բարձրացավ դժվարին ժամանակաշրջանում, սակայն կարողացավ զարկ տալ քաղաքաշինությանը, արհեստներին ու առևտրին, հիմնեց կամ վերակառուցեց բազմաթիվ ամրոցներ, անցկացրեց նոր ջրանցքներ:
դ. Ռուսա III–ի իշխանության շրջանից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Արարատյան դաշտի և Վանա լճի արևելյան շրջանների հնավայրերից:
ե. Հնագիտական պեղումներից հայտնաբերված արձանագիր առարկաները վկայում են, որ Սարդուրի I–ի ռազմաքաղաքական ազդեցության ոլորտը տարածված էր մինչև Հյուսիսային Կովկաս:
զ. Մենուայի առաջին քայլերից մեկն էր Եփրատի աջափնյա հատվածում ամրապնդվելը, որի նվաճումից հետո էլ հիմնադրվում է ռազմավարական խոշոր հենակետ Մենուախինիլի քաղաքը:
է. Վանի թագավորության հզորացման և տարածաշրջանում նշանակալի տերություն դառնալու գործում կարևոր դեր խաղացին Իշպուինիի և Մենուայի կատարած բարեփոխումները:

1) գ, դ, զ
2) բ, գ, ե
3) ա, գ, դ
4) բ, դ, է

64 **Տրվածներից ո՞ր երեք կետը Հայաստանի ազատագրության՝ Մովսես Սարաֆյանի կազմած ծրագրից չեն.**

ա. Հակաթուրքական պայքարի մեջ ընդգրկել Արցախի մելիքներին՝ նրանց տրամադրելով ռազմական հանդերձանք և զենք:
բ. Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:
գ. Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան:
դ. Հայաստանի կառավարությունը Պետերբուրգում պետք է ունենար իր դեսպանը:
ե. Թուրքիայի դեմ արշավանք սկսել Թիֆլիս–Ախալցխա–Կարս և Երևան–Բայազետ–Վան ուղղություններով:
զ. Հայերից և վրացիներից կազմավորված զորաջոկատների հրամանատարը պետք է լիներ հայազգի և ենթարկվեր ռուսական հրամանատարությանը:
է. Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին:

1) բ, դ, է
2) գ, ե, զ
3) բ, դ, ե
4) ա, դ, զ

61 **Կատարել համապատասխանեցում.**

Իրադարձություն

1. ՀՀ Սահմանադրության ընդունում
2. ՀՀ վարչատարածքային փոփոխությունների իրականացում
3. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե
4. ՀՀ նախագահական առաջին ընտրություններ
5. սահմանադրական հանձնաժողովի ստեղծում
6. եռաստիճան դատական համակարգի ներդրում

Տարեթիվ

ա. 1992 թ. հունվար
բ. 1990 թ. նոյեմբեր
գ. 1991 թ. հոկտեմբեր
դ. 1995 թ. հուլիս
ե. 1995 թ. դեկտեմբեր
զ. 1999 թ. հունիս
է. 2005 թ. նոյեմբեր

1) 1–դ, 2–ե, 3–զ, 4–է, 5–բ, 6–զ
2) 1–զ, 2–ե, 3–դ, 4–ա, 5–է, 6–բ
3) 1–դ, 2–ե, 3–է, 4–գ, 5–բ, 6–զ
4) 1–զ, 2–զ, 3–ա, 4–ե, 5–է, 6–բ

62 **Կատարել համապատասխանեցում.**

Հեղինակ

1. Հովհաննես Այվազովսկի
2. Եղիշե Թադևոսյան
3. Գևորգ Բաշինջաղյան
4. Վարդգես Սուրենյանց
5. Տիգրան Չուխաջյան
6. Անդրեաս Տեր–Մարուքյան

Ստեղծագործություն

ա. «Արշակ Բ»
բ. «Սևանա լիճ»
գ. «Դեպի Արագած տանող ճանապարհին»
դ. «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը»
ե. «Շամիրամն Արա Գեղեցիկի դիակի մոտ»
զ. Խաչատուր Աբովյանի հուշարձանը
է. «Տիրամայրը»

1) 1–բ, 2–դ, 3–գ, 4–ե, 5–ա, 6–զ
2) 1–գ, 2–զ, 3–բ, 4–դ, 5–ա, 6–ե
3) 1–դ, 2–է, 3–բ, 4–ե, 5–զ, 6–ա
4) 1–բ, 2–է, 3–գ, 4–զ, 5–ա, 6–ե

45 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն	**Ստեղծագործություն**
1. Սարգիս Մուրադյան	ա. «Ալեքսանդր Թամանյան»
2. Մոկո Հակոբյան	բ. «Կոմիտասի վերջին գիշերը»
3. Արտաշես Հովսեփյան	գ. «Սպասում»
4. Մինաս Ավետիսյան	դ. «Ոսկե ցլիկ»
	ե. «Իմ ժողովրդի պատմության տարեթվերից»

1) 1–ա, 2–բ, 3–դ, 4–ե
2) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ
3) 1–ե, 2–դ, 3–ա, 4–բ
4) 1–բ, 2–դ, 3–ա, 4–ե

46 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Հայ եկեղեցական առաջին ժողովը
բ. Շահապիվանի եկեղեցական ժողովը
գ. Դվինի առաջին եկեղեցական ժողովը
դ. Նիկեայի եկեղեցական ժողովը
ե. Դվինի II եկեղեցական ժողովը

1. 444 թ.
2. 506 թ.
3. 325 թ.
4. 554 թ.
5. 381 թ.
6. 354 թ.

1) ա–3, բ–6, գ–2, դ–5, ե–4
2) ա–6, բ–2, գ–1, դ–3, ե–5
3) ա–3, բ–1, գ–6, դ–5, ե–2
4) ա–6, բ–1, գ–2, դ–3, ե–4

47 **Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ.**

1) 1828 թ. մարտի 21–ին Նիկոլայ I–ի հրամանագրով Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից կազմված վարչական միավորը կոչվում էր Հայկական մարզ:
2) 1836 թ–ի մարտի 11–ին հրապարակված եկեղեցական կանոնադրությամբ (պոլոժենիե) սահմանվեցին Հայոց եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու ու կառավարության փոխհարաբերությունները:
3) 1840 թ. ապրիլի 10–ին վերացվել է Կասպիական մարզը և ստեղծվել երկու վարչամիավոր՝ Վրացա–իմերեթական նահանգ և Հայկական մարզ:
4) 1839 թ. սուլթանական կառավարությունը հրապարակել է թանզիմաթը՝ բարենորոգումների հրովարտակը՝ հռչակելով սահմանադրության ընդունումը և ազգերի իրավահավասարություն:
5) 1844 թ. Կ. Պոլսում ստեղծված մարմինը կոչվում էր Ազգային ժողով, որի անդամների մեծ մասը հայ արհեստավորներն էին:

48 **Հայաստանի թուլանալը հետևանք էր Բյուզանդական կայսրության կողմից իրականացված հետևյալ միջոցառումների.**

1) Հարկերից ազատվեցին միայն Բյուզանդական կայսրության տարածքում գտնվող Հայոց եկեղեցու թեմերը:
2) Հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ, և կայսրության արևմտյան շրջաններում նրանց տրվեցին ընդարձակ կալվածքներ:
3) Բյուզանդիային բռնակցված շրջանների հայ բնակչությունը և Հայոց եկեղեցին ենթարկվեցին ծանր հարկման, իսկ հայկական զորքերի մի մասն ուղարկվեց տերության խորքերը, մյուս մասն էլ ցիրուցան եղավ:
4) Քաղկեդոնականություն ընդունած հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ և կայսրության հյուսիսային շրջաններում տրվեցին ընդարձակ կալվածքներ, իսկ քաղկեդոնականություն չընդունած նախարարները զրկվեցին կալվածքներից և աքսորվեցին Կիլիկիա:
5) Հայկական զորքերի առանձին զորամիավորների հրամանատարներ նշանակվեցին բյուզանդացիներ, իսկ այդ զորամասերը բաշխվեցին բյուզանդական բանակների կազմում և ուղարկվեցին Հյուսիսային Միջագետք:

49 **Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Արարայի ճակատամարտը
2) «Լոռու չեզոք գոտու» ստեղծումը
3) Արցախահայության 9–րդ համագումարը
4) Վիլսոնի իրավարար վճռի հրապարակումը
5) ՀՀ զինանշանի մասին օրենքի ընդունումը
6) թուրք–հայկական երկրորդ պատերազմի ավարտը

50 **Ստորև տրված պնդումներում գտնել երկու սխալ.**

1) Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներում պատկերված են Գագիկ II–ը և Սբ Գրիգոր Լուսավորիչը:
2) Միջնադարյան նշանավոր խաչքարագործ վարպետներ էին Մոմիկը և Պողոսը:
3) Կիլիկյան Հայաստանում կար 112 բերդ:
4) VII–VIII դարերում քանդակագործության մեջ ինքնուրույն ճյուղ դարձավ խաչքարերի արվեստը:
5) Միջնադարում ճարտարապետության բնագավառում հատկապես զարգացան քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը և եկեղեցաշինությունը:

59 **Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

ա. «Նոր տետրակ»–ի լույսընծայումը Պետերբուրգում
բ. Հովսեփ Էմինի վերջնական վերադարձը Հնդկաստան
գ. Գեորգիևսկի դաշնագրի կնքումը Ռուսաստանի և Վրաստանի միջև
դ. Մովսես Սարաֆյանի՝ Հայաստանի ազատագրության ծրագիրը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային ներկայացնելը
ե. XVIII դարի երկրորդ կեսին ռուս–թուրքական առաջին պատերազմի սկիզբը
զ. Հերակլ II–ի՝ Պարսկաստան քշված հայ բնակչությանը հղած ուղերձի տպագրումը Մադրասում:

1. 1768 թ.
2. 1769 թ.
3. 1770 թ.
4. 1783 թ.
5. 1786 թ.
6. 1790 թ.
7. 1792 թ.

1) ա–5, բ–3, գ–4, դ–2, ե–1, զ–7
2) ա–5, բ–3, գ–4, դ–1, ե–2, զ–6
3) ա–1, բ–2, գ–3, դ–5, ե–7, զ–6
4) ա–3, բ–1, գ–2, դ–7, ե–4, զ–6

60 **Կատարել համապատասխանեցում.**

Հայկական հրաձգային գումարտակ	Հրամանատար
1. I	ա. Ս. Սամարցյան
2. II	բ. Պ. Փիրումյան
3. III	գ. Ա. Տեր–Նիկողոսյան
4. IV	դ. Ա. Հովսեփյան
5. V	ե. Պ. Բեժանբեկ
6. VI	զ. Հ. Բժշկյան
	է. Մ. Մելիք–Մուրադյան

1) 1–ե, 2–ա, 3–գ, 4–դ, 5–բ, 6–է
2) 1–զ, 2–գ, 3–ա, 4–բ, 5–ե, 6–դ
3) 1–ե, 2–ա, 3–բ, 4–զ, 5–դ, 6–զ
4) 1–դ, 2–է, 3–բ, 4–ե, 5–զ, 6–ա

57 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. վրացական ռազմակալման դեմ ապստամբության սկիզբը Լոռիում
բ. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Թիֆլիս
գ. դիվանագիտական առաքելությամբ 11–րդ Կարմիր բանակի և ՀՍԽՀ–ի ներկայացուցիչների միացյալ պատվիրակության ժամանումը Գորիս
դ. քեմալական զորքերի դուրսբերումը Ալեքսանդրապոլից
ե. Ախալքալաքի գավառը ՀՍԽՀ–ին միացնելու վերաբերյալ Ա. Բեկզադյանի առաջարկի ներկայացումը հանձնաժողովի նիստում
զ. Մոսկվայում թուրքական պատվիրակության հանդիպումը Ստալինին
է. Մոսկվայի ռուս–թուրքական 2–րդ կոնֆերանսի բացումը
ը. Փետրվարյան ապստամբության սկիզբը
թ. Հայ–վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը

1) գ, ա, զ, ը, բ, է, թ, ե, դ
2) գ, ը, զ, ա, բ, ե, թ, դ, է
3) ա, գ, ե, բ, դ, զ, թ, է, ը
4) գ, ա, ը, զ, բ, է, դ, ե, թ

58 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. գյուղմիասհարկի շրջանառության մեջ մտնելը
բ. 390–րդ դիվիզիայի կազմացրումը
գ. Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության (ՀԿԵՄ) ստեղծումը
դ. «Մեծ բեկման տարի» հոդվածի հրապարակումը
ե. դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը
զ. Երկրորդ համաշխարհային պատերազմում Կարապետ Սիմոնյանի՝ առաջին հայի՝ հերոսի կոչմանն արժանանալը
է. Նելսոն Ստեփանյանի մահը

1) գ, ե, ա, դ, զ, է, բ
2) գ, ա, ե, դ, զ, բ, է
3) դ, ե, ա, գ, բ, զ, է
4) գ, ա, ե, դ, բ, զ, է

Բ մակարդակ

51 **Գործառույթները համապատասխանեցնել Կիլիկյան Հայաստանի արքունի գործակալին.**

1. սենեսկալ
2. կանցլեր
3. թագադիր
4. պայլ
5. գունդստաբլ

ա. արքունի պալատի կառավարիչը. տնօրինում էր արքունի եկամուտները և ծախսերը
բ. թագավորի առաջին խորհրդականը. արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան, իսկ թագավորի անչափահասության դեպքում իրականացնում էր արքայի և ամբողջ երկրի խնամակալությունը
գ. իրականացնում էր արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը, գահաժառանգների դաստիարակությունը, տնօրինում հանրային աշխատանքները, պետական պարհակներն ու հարկահանության գործը
դ. բանակի ընդհանուր հրամանատարը Կիլիկիայում
ե. հանդիսությունների ժամանակ թագ էր դնում թագավորի գլխին, կապում արքայական նշանները, հետևում էր արքունի կարգ ու կանոնի պահպանմանը
զ. ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ

1) 1–դ, 2–գ, 3–զ, 4–բ, 5–ա
2) 1–ա, 2–զ, 3–ե, 4–գ, 5–բ
3) 1–գ, 2–ա, 3–ե, 4–բ, 5–դ
4) 1–ա, 2–զ, 3–ե, 4–բ, 5–դ

52 **Հասկացությունը համապատասխանեցնել բովանդակությանը.**

1. Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե
2. Հայկական ազգային կոմիտե
3. Հատուկ կառավարման կոմիտե
4. Հայաստանի օգնության կոմիտե
5. Հայրենիքի փրկության կոմիտե

ա. ԽՍՀՄ ԳԽ նախագահության կողմից Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին
բ. Արևմտահայերի առաջին համագումարում ստեղծված մարմին
գ. ԱՄՆ–ում դաշնակցության կողմից ստեղծված Հայ դատի հանձնախումբ՝ հայոց պահանջատիրության պաշտպանության նպատակով
դ. Հայաստանի կառավարությանն առընթեր կազմավորված մարմին՝ սփյուռքահայերի ներգաղթն իրականացնելու նպատակով
ե. Խորհրդային Հայաստանին արտաքին օգնության նպատակով 1921 թ. ստեղծված մարմին
զ. Փետրվարյան ապստամբության ժամանակ Հայաստանում ստեղծված իշխանության մարմին

1) 1–դ, 2–գ, 3–ա, 4–ե, 5–զ
2) 1–ե, 2–բ, 3–զ, 4–գ, 5–ա
3) 1–ե, 2–դ, 3–զ, 4–բ, 5–ա
4) 1–դ, 2–գ, 3–ա, 4–բ, 5–զ

53 **Բերված փաստարկներից առանձնացնել հայկական անկախ պետականության վերականգնման ներքին նախադրյալները.**

ա) Առանձին երկրների արաբ ամիրաները տեղերում ամրապնդել էին իրենց իշխանությունը և ձգտում էին անջատվելու խալիֆայությունից:
բ) Լայն ծավալ ստացած ժողովրդական ազատագրական ընդվզումները, մասնավորապես Ատրպատականում Բաբեկի գլխավորած ապստամբությունը և զահակալական կռիվները խարխլել էին խալիֆայության կենտրոնական իշխանության դիրքերը:
գ) Հայոց եկեղեցին ջանում էր ազատվել կրոնական հալածանքներից, իսկ աշխատավորական զանգվածները՝ օտարերկրյա ծանր լծից:
դ) Առաջադիմում ու խորանում էին ավատատիրական հարաբերությունները, աստիճանաբար ամրապնդվում էր հայ իշխանների ժառանգական հողատիրությունը, ընդարձակվում էին նրանց կալվածքները:
ե) Բյուզանդիան ամեն կերպ աջակցում էր խալիֆայության կենտրոնախույս ուժերին:

1) բ, ե
2) գ, դ
3) գ, ե
4) ա, դ

54 **Հայաստանի իշխանությունները Թիֆլիսի 1920 թ. օգոստոսի 10–ի համաձայնագրին կարևոր նշանակություն չէին տալիս, որովհետև՝**

ա. այն համարում էին ձևական և ժամանակավոր
բ. երկրի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակը և Հայկական հարցի լուծումը կապում էին Սևրի պայմանագրի հետ
գ. մտածում էին, որ իրենք ստեղծված իրավիճակում այլ ելք չունեն
դ. նրանք հասկանում էին, որ Սևրի պայմանագիրը հնարավոր չէ իրագործել
ե. համոզված էին, որ եվրոպական հզոր պետությունների ջանքերով կիրագործվի Սևրի պայմանագիրը
զ. գերագնահատում էին Ռուսաստանի դերը տարածաշրջանային խնդիրներում
է. Ենթադրում էին, որ դրանով կխոչընդոտեն քեմալա–բոլշևիկյան համագործակցության ամրապնդմանը

1) բ, ե, է
2) դ, զ, է
3) ա, զ, ե
4) ա, բ, ե

55 **Վահանանց պատերազմի շրջանի իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Նվարսակի պայմանագրի կնքումը
բ. Ակոռիի ճակատամարտը
գ. պարսիկների հարձակումը Շաղազոմ գավառում գտնվող ապստամբների խմբի վրա
դ. պարսիկ պաշտոնյա Նիխորի ուղարկվելը Հայաստան
ե. Սահակ Բագրատունու և Վասակ Մամիկոնյանի զոհվելը
զ. պարսից թագավոր Վաղարշ Սասանյանի գահակալության սկիզբը
է. Վարդ Մամիկոնյանի ազատվելը պարսից պատանդությունից
ը. պարսից գնդի ջախջախումը Կարնո Արծաթի գյուղի մոտ
թ. հայոց զորքի բանակումը Վարշակի Ջերմուկներում
ժ. Հազարավուխտի գլխավորած պարսից զորքի ներխուժումը Հայաստան

1) ը
2) ժ
3) գ
4) զ

56 **Ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել երրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Երևանի գրավումը շահ Աբասի կողմից
բ. Բաղդադի գրավումը թուրքերի կողմից և թուրք–պարսկական պատերազմների ավարտը
գ. շահ Աբասի հարձակումը և Թավրիզի գրավումը
դ. շահ Աբասի հրամանով հայ բնակչության տեղահանության սկիզբը
ե. շահ Աբասի գահակալության սկիզբը
զ. Նախիջևանի գրավումը շահ Աբասի կողմից
է. Կասրե Շիրինի պայմանագրի կնքումը
ը. շահ Աբասի կողմից Այսրկովկասի ու Ատրպատականի զիջումը օսմանցիներին
թ. շահ Աբասի մուտքը Ջուղա

1) գ
2) դ
3) թ
4) ա